ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

"20" հունիսի 2013թ № 98 Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ «ԿԱՊԱՆ-ԳՈՐԻՍ», «ԿԱՊԱՆ-ՔԱՋԱՐԱՆ» ՆԵՐՄԱՐԶԱՅԻՆ ԵՐԹՈՒՂԻՆԵՐՈՒՄ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԱՎՏՈՄՈԲԻԼԱՅԻՆ ՏՐԱՆՍՊՈՐՏՈՎ ՈՒՂԵՎՈՐՆԵՐԻ ԿԱՆՈՆԱՎՈՐ ՓՈԽԱԴՐՈՒՄՆԵՐՆ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԸՆՏՐՈՒԹՅԱՆ ՄՐՑՈՒՅԹԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Իրավական ակտերի մասին» օրենքի 19-րդ հոդվածի 1-ին կետով և Հայաստանի Հանրապետության կառավարության 2001թվականի օգոստոսի 16-ի «Հայաստանի Հանրապետությունում ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային տրանսպորտով ուղևորների կանոնավոր փոխադրումներն իրականացնող կազմակերպությունների ընտրության մրցույթի անցկացման մասին» N 762 որոշմամբ հաստատված կարգի 50-րդ կետով, **ո ր ո շ ու մ եմ՝**

1.Հաստատել Սյունիքի մարզի «Կապան-Գորիս», «Կապան-Քաջարան» ներմարզային երթուղիներում ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային տրանսպորտով ուղևորների կանոնավոր փոխադրումներն իրականացնող կազմակերպությունների ընտրության մարզային մրցութային հանձնաժողովի կողմից 2013 թվականի մայիսի 30-ին անցկացված մրցույթի արդյունքների վերաբերյալ արձանագրությունները՝ համաձայն հավելվածի:

2.Մրցույթում հաղթող ճանաչված կազմակերպությունների երթուղիների սպասարկման ժամկետ սահմանել երեք տարի:

3.Մարզպետարանի աշխատակազմի ղեկավարին. ապահովել սույն որոշումից բխող անհրաժեշտ գործառույթների իրականացումը:

ՀՀ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏԻ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ Ա.ԴՈԼՈՒՆՑ

2013թ հունիսի 20
ք. Կապան

Հավելված
ՀՀ Սյունիքի մարզպետի
2013թ. հունիսի 20-ի N98 Ա որոշման

Ա ր ձ ա ն ա գ ր ու թ յ ու ն

ՀՀ Սյունիքի մարզի ներմարզային երթուղիներում ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային տրանսպորտով ուղևորների կանոնավոր փոխադրումներն իրականացնող կազմակերպությունների ընտրության նպատակով անցկացված մրցույթի արդյունքները ամփոփելու մասին

ք. Կապան

2013թ. մայիսի 30 ժ 15-00

ՀՀ Սյունիքի մարզպետի 2010թ. ապրիլի 28-ի N 31 որոշմամբ հաստատված մրցութային հանձնաժողովի կազմը՝ նախագահ՝ Ա.Դոլունց - ՀՀ Սյունիքի մարզպետի տեղակալ, Ա. Ուստաբաշյան – քաղաքաշինության վարչության պետ, հանձնաժողովի նախագահի տեղակալ, քարտուղար՝ Ս. Աղաբեկյան - քաղաքաշինության վարչության տրանսպորտի և ճանապարհաշինության բաժնի պետ, Ս.Ավետիսյան - ՏԻ և ՀԳՄՀ վարչության պետ, Ս. Արզումանյան - ՀՀ տրանսպորտային տեսչության Սյունիքի տարածքային բաժնի պետ, Ա.Աթայան - ՀՀ ճանապարհային ոստիկանության Կապանի հաշվառման-քննական բաժանմունքի պետ, ոստիկանության փոխգնդապետ:

Քննարկեցին 2013 թ. մայիսի 30-ին կայացած «Կապան-Գորիս», «Կապան-Քաջարան» երթուղիներում մրցույթի արդյունքները:

«Կապան-Գորիս» ներմարզային երթուղում հայտ էր ներկայացրել «Կարեն-Գարիկ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը (գտնվելու վայրը՝ ք.Կապան, Հունան Ավետիսյան 2/2):

«Կապան-Քաջարան» ներմարզային երթուղում հայտ էր ներկայացրել «Վաչագան-Նավասարդ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը (գտնվելու վայրը՝ ք.Կապան, Գործարանային 3):

Մրցութային հանձնաժողովը՝«Կապան-Գորիս»,«Կապան-Քաջարան» ներմարզային երթուղիների մրցույթի արդյունքում կայացրած քվեարկությամբ (կողմ-5, դեմ 0, ձեռնպահ-0) հաղթող ճանաչեց համապատասխանաբար «Կարեն-Գարիկ»,«Վաչագան-Նավասարդ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություններին:

Արձանագրության արդյունքները երկշաբաթյա ժամկետում անհրաժեշտ է ներկայացնել ՀՀ Սյունիքի մարզպետին համապատասխան իրավական ակտ ընդունելու նպատակով:

Հանձնաժողովի նախագահի տեղակալ՝ Ա.Ուստաբաշյան

անդամներ Ս.Աղաբեկյան

Ս.Արզումանյան

Ա. Աթայան

Կ.Կոզմանով

Արձանագրություն N1

ՀՀ Սյունիքի մարզի ներմարզային երթուղիներում ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային տրանսպորտով ուղևորների կանոնավոր փոխադրումներն իրականացնող կազմակերպությունների ընտրության մրցութային հանձնաժողովի

ք.Կապան 2013 թ. հունիսի 10-ի նիստի

Նիստը վարում էր հանձնաժողովի նախագահի տեղակալ՝ Ա.Ուստաբաշյան, քարտուղար՝ Ս. Աղաբեկյան

Նիստին մասնակցում էին հանձնաժողովի թվով 5 անդամներ՝ Ա.Ուստաբաշյանը, Ս.Աղաբեկյանը, Ա.Աթայանը, Ս.Արզումանյանը, Կ. Կոզմանովը

Օրակարգում – ՀՀ Սյունիքի մարզի ներմարզային երթուղիներում ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային տրանսպորտով ուղևորների կանոնավոր փոխադրումներն իրականացնող կազմակերպությունների ընտրության նպատակով 2013 թվականի մայիսի 30-ին կայացած մրցույթի արդյունքների ամփոփման մասին:

Լսեցին – ՀՀ Սյունիքի մարզի ներմարզային երթուղիներում ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային տրանսպորտով ուղևորների կանոնավոր փոխադրումներն իրականացնող կազմակերպությունների ընտրության նպատակոն 2013 թվականի մայիսի 30-ին կայացած մրցույթի արդյունքների ամփոփման մասին:

/ Զեկ. Ս. Աղաբեկյան/

Ուսումնասիրելով կայացած մրցույթի ընթացքում մասնակիցների ներկայացրած հայտերը և գնահատելով մրցույթին ներկայացված տրանսպորտային միջոցների տեխնիկական վիճակները մրցութային հանձնաժողովը **որոշում է.**

1. Հաղթող ճանաչել <<Կարեն-Գարիկ>> սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը ներմարզային հետևյալ երթուղում.

1.1 <<Կապան-Գորիս», ավտոմեքենաների մակնիշները՝ «Ֆորդ», պետհամարանիշը՝ 888 SU 51, «Ֆորդ», պետհամարանիշը՝ 222 QQ 12:

2.Հաղթող ճանաչել <<Վաչագան-Նավասարդ>> սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը ներմարզային հետևյալ երթուղում.

2.1<<Կապան-Քաջարան», ավտոմեքենաների մակնիշները՝ «ԳԱԶ-322132», պետհամարանիշը՝ 038 LD 61, «Ֆորդ», պետհամարանիշը՝ 2223L:

Սույն որոշումը ներկայացնել ՀՀ Սյունիքի մարզպետի հաստատմանը:
(Քվեարկության արդյունքները՝ կողմ՝5, դեմ՝ չկա, ձեռնպահ՝ չկա):

Հանձնաժողովի նախագահի տեղակալ Ա.Ուստաբաշյան

անդամներ Ս. Աղաբեկյան

Ա.Աթայան

Ս. Արզումանյան

Կ.Կոզմանով